

մանք՝ (1 Մարտ 1878) վերջ՝ անոր յաջորդ կը հանդիսանայ Ղալաբիա, օժանդակութեամբ հանգու յայն որդույն՝ Վանրամի: — Յ. Մարգարեանի գիտն է նայ աշուրներով յարդագոյն բաշկինակ մը՝ զոր Յակոբեան Միքայելի միջոցաւ պատրաստել ու բերել տուած էր Մանչեսթրէն, և որուն 4 անկիւնները հրեշտակներու դէմքեր կային, մինչ պորտին դրոշմուած էին Մետրոպոլիտան տառեր՝ բուսանշաններով հանդերձ, ստորեւ կրելով սա նախադասութիւնը. «Կարդայ սորվեցեք, զերար սիրեցեք»: Այդ բաշկինակները բուրդի տեղ իրը պատառ գործածուած են ձրիարար՝ գաւառացի Հայերու կողմէ իր խանութէն գնուած գիրքերու: Բաց աստի տակ տուած է խաչի՛ բուրդեր որոնց վրայ կային հատուածներ Հայոց Պատմութենէն, գրուած Արմենակ Հայկունիի կողմէ: — Մարգարեան 1862 ին հրապարակ հանած է պատի փոքրադիր օրացոյց մը որուն մէն մի բերքին ստորեւ կար երկտողեակ մը եզովքոսի առակներէն: Շատ վերջերք, Ռուսիա՝ Կ. Ափինեան և Վենետիկ՝ Միքիարեանը կատարելագործած են զայն: — Ընթերցասիրութիւնը Հայաստանի մէջ ծաղկած տեսնելու տեսելով, Յարութիւն գրեթէ ամէն գաւառ գատ գատ տասնեակ ոսկի արժողութեամբ գիրքեր կը բաշխէ իրը դրամագոլու, պայման դնելով որ նոր ապագրանքներու փոխարժէքը միայն պիտի պահանջէ: Այդ ստակները մեծ մասամբ կորսուած են յետոյ: — Անգամ մը Երուսաղէմ ուղեւորութեանն առթիւ Երեմիա Ձեյկալիի իսկական գիրով 100 տարուան ձեռագիր բանկագին ժամանակագրութիւնը նուիրած է Ս. Յակովբեանց վանքին: — Երկար ատեն անդամակցած է Վանորեկց խորհրդոյ և շատ օգտակար առաջարկներ ներկայացուցած: Երեսփոխան ընտրուած է Պէշիքքաշէն, ուր «Հայկազեան Ընկ.»ը կազմած էր, հրատարակելով Ն. Մեզպուրեանի, Ջօրայեանի, Մուրատեանի և Ա. Մ. Գարագաշեանի դասագիրքերը որոնք — ընկերութեան նըպատակին համեմատ — առանց շահու ծախուած են: — Մարգարեանի նշանաբան խօսքերն էին. «Հայ մարդուն՝ նայ աղջիկ». «Մինչեւ Ա. զաւկիդ ծնունդը՝ կնոջդ նետ իր նշանած վարուէ». «Երբ ուսուցիչներ կառքով երբան, գիտցեք որ ազգը յուսատրուած է»: «Երբ ամէն նայ գրել-կարդայ մը գիտնայ, ինքնին կու գայ ազատութիւնը»: — 1870 ի սկիզբները բացած է տպարան մը Քիւրքճի խան, զոր եպարզ և Էօլի Չրգմագ խաները փոխադրած է յաջորդարար և որ՝ մահուանը յաջորդ տարին փոխանցուած է իր որդույն՝ Վանրամի: Հոն տպուած են (1871-8). — Արկածք ազնիւ տղային և բռնցնոյն, Ընդհ. տեղագրութիւն Գաղատիոյ վիճակին վրայ, Քեօր



ՎԱՆՐԱՄ Յ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

օղլու, Գաստիարակ մանկանց, Թանիր իւլ Շեօնք, Համառ.օս ընտանեկան խօսակցութիւն, Հեգարան մանկանց, և այլն:

\* \* 1873 ին իր քով առած էր արդէն գաւկըներէն Վ.Ա.Հ.Ր.Ա.Մը: Միւս որդին է Միհրդատ որ նիմայ տպագր. գործով կ'զբաղի և որուն որդին Ռակիան իր հօրեղբոր՝ Վանրամի քով ծառայելի վերջ, այժմ գրատուն մը բացած է Մեծ Նոր խանի գետնայարկը: — Վանրամ ծնած է Պէշիքքաշ 9 Սեպտ. 1857 ին և նին. կրթ. ստացած անդ: 1869 ին Բարիզ Մուրատեան վարժարանը դրկուած է, ուրկէ տարի մը վերջ վերադարձած է՝ պատերազմին պատճառաւ, կրկին յաճախելով Մաքրունեան դպրոցը՝ Նար Պէյի տեսչութեան օրով, ուրկէ շրջանաւարտ եղած է և մտած հօրը գրախանութի: Հայրը մահուրէն 3 տարի առաջ Գ. Ջարդարեանի տպագրած օրացոյցին ետեւ դրոշմէն տուած է «Գրատուն Վ. Յ. Մարգարեան», ապագայ յաջորդին անունը կենդանութեանը նուիրագործած ըլլալու համար: Անոր մահէն վերջ, Վանրամ կ'ստանձնէ բոլոր գործերը: 1880 ին տպագր. նոր օրենքին համաձայն կ'ստիպուի 1000 ոսկուոյ երաշխաւորութիւն տալ: Այդ բուսականէն կ'սկսին խստանայ մամուլի օրէնք և գրաքննութիւն: 1881 ին ինք և Ս. Պարտիզպանեան կը կանչուին Պատմ. Ատեանի կողմէ, մին «Արուեստ նամակագրութեան», իսկ միւսը Ստ. Փափագեանի Ընթերցարան գիրքերն առանց արտօնութեան հրատարակած ըլլալուն: Վանրամի փաստարանութեամբ դատը կը վերջանայ 25 դրչ.ի տուգանքով, մինչ ընդհ. դատախազը 50 ոսկի կը պահանջէր: Այնուհետեւ առանց հրամանի տպուած անվնաս գիրքե-